



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 17/21**

12.07.2021թ.

ք. Երևան

ՀՀ քաղաքացի Գուրգեն Ասքանազի Մետրոպյանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 4-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 75-րդ, 78-րդ և 171-րդ հոդվածներին:

Ըստ Դիմողի, հակընդդեմ ապահովում կիրառելու մասին որոշումը հանդիսանում է հնարավոր վնասների ապահովման միջոց, որպիսի պայմաններում անձի համար առաջանում է դատարանի դեպոզիտ հաշվին գումար վճարելու պարտականություն, որը չկատարելու դեպքում կիրառված հայցի ապահովման միջոցը վերացվում է: Նշվածից հետևում է, որ հակընդդեմ ապահովում կիրառելու մասին որոշումը որևէ առնչություն չունի գործի ճիշտ կամ սխալ լուծման հետ, այսինքն՝ եթե նույնիսկ դատարանը հակընդդեմ ապահովում կիրառելիս թույլ է տվել դատավարական իրավունքի կոպիտ խախտում, ապա այն չի կարող հանգեցնել դատական ակտի բեկանման, քանի որ այն հարցերը, որոնց շոշափում է հակընդդեմ ապահովում կիրառելու մասին որոշումը, չեն առնչվում գործի (բուն վեճի) ճիշտ կամ սխալ լուծման հետ:

Նշվածից հետևում է, որ տվյալ որոշումը՝ անկախ առաջին ատյանի դատարանի կողմից կամ վերաքննիչ դատարանի կողմից կայացվելու հանգամանքից, հնարավոր չէ վիճարկել գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում՝ հետաձգված բողոքարկման կարգով, իսկ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ և 135-րդ հոդվածի 4-րդ մասերի, ինչպես նաև 388-րդ հոդվածի ուժով առկա չէ տվյալ որոշումն

անմիջականորեն բողոքարկելու հնարավորություն, ստացվում է, որ առաջին ատյանի դատարանի կողմից կամ վերաքննիչ դատարանի կողմից հակընդդեմ ապահովում կիրառելու մասին որոշումն ընդհանրապես ենթակա չէ բողոքարկման, այլ խոսքով առկա չէ տվյալ տեսակի դատական ակտի բողոքարկման արդյունավետ կառուցակարգ:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցի քննության համար էական նշանակություն ունի ոչ միայն դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտում թույլ տալը, այլ նաև բողոքում բարձրացված հարցի նշանակությունն օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար: Որևէ հարցի վերաբերյալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությանն զնահատական տալու լիազորությունը վճռաբեկ դատարանի բացառիկ լիազորությունն է, հետևապես, ո՛չ առաջին ատյանի դատարանը, ո՛չ վերաքննիչ դատարանը չեն կարող օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության հարցին որևէ զնահատական տալ:

Այսպիսով, հակընդդեմ կիրառում ապահովելու մասին որոշումը որևէ ձև բողոքարկելու հնարավորության բացակայության պայմաններում՝ ստեղծվում է մի իրավիճակ, ըստ որի հակընդդեմ կիրառում ապահովելու մասին կիրառված դատական ակտերում առկա հարցերի վերաբերյալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության հնարավորությունն ընդհանրապես բացառվում է, որպիսի պայմաններում առաջանում է առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի կողմից իրար հակասող որոշումներ կայացնելու իրական հնարավորություն, օրինակ՝ վերաքննիչ դատարանը կարող է միննույն իրավիճակում կայացնել միմյանց հակասող որոշումներ (փաստացի կայացվում են միմյանց հակասող բազմաթիվ որոշումներ), և անհնարին կլինի հասկանալ, թե որում արտահայտված մեկնաբանությունն է իրավացի:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 135-րդ հոդվածի 4-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 75-րդ, 78-րդ և 171-րդ հոդվածներին:

Վիճարկվող դրույթի՝ Օրենսգրքի 135-րդ հոդվածի 4-րդ մասի բովանդակությունը հետևյալն է.

4. Հակընդդեմ ապահովում պահանջելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա չէ բողոքարկման:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրության 171-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է:

2. Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը.

2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Այսպես, Օրենսգրքի 135-րդ հոդվածի 4-րդ մասը վերաբերում է հակընդդեմ ապահովում պահանջելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշումը վերադասության կարգով վերաքննիչ դատարան բողոքարկմանը: Ըստ նշված հոդվածի՝ հակընդդեմ ապահովում պահանջելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման վերաքննիչ դատարան, իր հերթին՝ վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա չէ բողոքարկման վճռաբեկության կարգով:

Օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք ունեն վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք՝ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով:

Օրենսգրքի 388-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիման վրա նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով քննում է վերաքննիչ դատարանի եզրափակիչ և միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքները:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը գործին մասնակցող անձանց վերապահել է վերաքննիչ դատարանի եզրափակիչ և միջանկյալ դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք: Մինչդեռ միջանկյալ դատական ակտերի մասով այդ իրավունքը բացարձակ չէ՝ այն պայմանավորված է նույն օրենսգրքով նախատեսված լինելու անհրաժեշտ պայմանով՝ վճռաբեկ դատարանին իրավունք վերապահելով միջանկյալ դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքները քննելու միայն նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում: Այսինքն՝ որպեսզի անձը հնարավորություն ունենա վճռաբեկության կարգով բողոքարկելու վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտը, ապա նման հնարավորությունը պետք է պարտադիր նախատեսված լինի նույն օրենսգրքով:

Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սպառիչ սահմանել է վերաքննիչ դատարանի այն միջանկյալ դատական ակտերի շրջանակը, որոնց դեմ վճռաբեկ բողոքներն իրավասու է քննելու վճռաբեկ դատարանը: Դրանք են՝

1) նույն օրենսգրքի 155-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատական տուգանք կիրառելու մասին վերաքննիչ դատարանի որոշումը,

2) նույն օրենսգրքի 371-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը,

3) նույն օրենսգրքի 380-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված գործի վարույթը կասեցնելու մասին վերաքննիչ դատարանի որոշումը,

4) նույն օրենսգրքի 383-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վերաքննիչ դատարանի լրացուցիչ որոշումը կամ այն կայացնելը մերժելու մասին որոշումը,

5) նույն օրենսգրքի 384-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վերաքննիչ դատարանի որոշման մեջ տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու կամ դրանց վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշումը, որոնց բողոքարկումը վճռաբեկության կարգով ուղղակիորեն նախատեսված է նույն օրենսգրքով:

Տվյալ դեպքում վճռաբեկության կարգով բողոքարկվել է ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի «Հայցի ապահովման միջոցը վերացնելու, հակընդդեմ ապահովման միջոց կիրառելու միջնորդությունները քննարկելու մասին» որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված Վերաքննիչ դատարանի որոշումը, որը վերը նշված նորմերի համատեքստում միջանկյալ դատական ակտ է և վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա չէ:

Անդրադառնալով անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներին՝ Սահմանադրական դատարանը 2007 թվականի հունվարի 16-ի ՍԴՈ–673 որոշման մեջ արձանագրել է. «8.Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18 հոդվածի նպատակն իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է»:»:

Անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքին՝ վերադատության կարգով բողոքարկման ինստիտուտի տեսանկյունից, Սահմանադրական դատարանը 2011 թվականի փետրվարի 8-ի ՍԴՈ–936 որոշման մեջ նշել է. «5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է.

– անձի (այդ թվում՝ իրավաբանական) իրավունքները և ազատությունները դատարանում պաշտպանելու իրավունքը,

– դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը,

– դատական պաշտպանության իրավունքը՝ հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ,

– խախտված իրավունքներն անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում և հրապարակային քննության միջոցով վերականգնելու իրավունքը:

Միաժամանակ, սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է (դատական բողոքարկումը (ՀՀ Սահմ. 20–րդ հոդվածի 3–րդ մաս): Վերջինս նաև անձի իրավունքների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականություն է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում՝ դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործումը:»:

Անդրադառնալով բողոքարկման ինստիտուտի էությանը՝ Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՄԴՈ–719 որոշման մեջ արձանագրել է. «5. Բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունը՝ ընդհանրապես, և արդարադատության համակարգի ներսում՝ մասնավորապես, հանգում է նրան, որ մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս ատյանին: Այս տրամաբանությամբ է կառուցված ՀՀ արդարադատական համակարգի ներսում բողոքարկման ողջ մեխանիզմը:»:

Անդրադառնալով նաև մարդու իրավունքների սահմանափակման հնարավորությանը, Սահմանադրական դատարանը 2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՄԴՈ–649 որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «... Սահմանադրորեն նախատեսված սահմանափակման ենթակա իրավունքների առնչությամբ, համաձայն մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չզրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը):»:

Սահմանադրական դատարանը, 2007 թվականի փետրվարի 7-ի ՄԴՈ-677 որոշման մեջ անդրադառնալով համաչափության սկզբունքին, արձանագրել է հետևյալը. «Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար»:

Ստացվում է, որ օրենսդիրը պարտավոր է նախատեսել այնպիսի իրավակարգավորումներ, որոնք բացառեն անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների որևէ սահմանափակում, եթե այն պայմանավորված չէ Սահմանադրությամբ թույլատրելի հանգամանքներով: Այլ կերպ, եթե որևէ իրավակարգավորման շրջանակներում խախտվում է այդ պահանջը, ապա այն դադարում է իրավական և սոցիալական, հետևաբար՝ նաև սահմանադրական լինելուց, իսկ օրենքով համապատասխան երաշխիքների (կանոնակարգման) բացակայությամբ էլ՝ պայմաններ են ստեղծվում հակասահմանադրական իրավիճակի առաջացման համար: Հետևաբար, օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ՝ չսահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացմանը, եթե այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին (ՄԴՈ-1244):

Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության

61-րդ և 63-րդ հոդվածների նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է: Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում:

Այսինքն՝ անձը պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեգիտիմ ակնկալիքով: Հակառակ պարագայում արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացումը դառնում է ոչ մատչելի և թերի, չի բխում իրեն իրավական հոշակած պետության և ժողովրդավարական հասարակության նպատակներից: Օրենսգրքի վիճարկվող դրույթով հակընդդեմ ապահովում պահանջելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկ դատարան բողոքարկելու սահմանափակումը հանգեցնում է սահմանադրորեն երաշխավորված արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների ոտնահարման, նման սահմանափակումը օբյեկտիվորեն հիմնավորված և համաչափ չէ: Ավելին, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր դատական աստյանի գործառույթի իրացման արդյունքում անձի իրավունքների դատական պաշտպանությունը նոր որակ է ստանում, յուրաքանչյուր դատական աստյանի կողմից իր գործառույթների իրականացման արդյունքում ընդունված դատական ակտն իր ինքնուրույն դերակատարությունն ունի դատական պաշտպանության իրավունքի իրացման ողջ գործընթացում, ապա կարելի է փաստել, որ գործող կարգավորումը առնվազն չի համապատասխանում Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ չէ դրանց հասնելու համար: Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է, այլև այն հիմնական և էական իրավական երաշխիքը,

որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին աստիճանի և վերաքննիչ դատարանները չեն պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին չունենալով վճռաբեկության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից:

Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելու լիազորությունների իրականացման համար, ի թիվս այլնի, կարևոր երաշխիք է նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորմամբ, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացումը: Նշված համատեքստում կարևորվում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, ինչն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունն ինչպես այլ, այնպես էլ վճռաբեկ վարույթում գնահատելու առումով: Գտնում ենք, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրել էլ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ: Վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է գերակայեն վճռաբեկ դատարանի մատչելիության և արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման երաշխիքները (ՄԴՈ-1192):

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո, հնարավոր է արձանագրել, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվող դատական պաշտպանության իրավունքը ներառում է նաև վճռաբեկ դատարանում անձի իրավունքների պաշտպանության իրավունքը, որն իր հերթին ներառում է վճռաբեկ աստիճանի մատչելիության իրավունքը, որը պետք է ապահովվի՝ հաշվի առնելով վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը և վճռաբեկ դատարանում

վարույթի առանձնահատկությունները: ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը և վճռաբեկ դատարանում վարույթի առանձնահատկությունները մանրամասնված են սահմանադրական դատարանի 2007թ. ապրիլի 9-ի ՄԴՈ-690 որոշման մեջ: Սահմանադրական դատարանն իրավական պետության սկզբունքների և արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում առանձնակիորեն կարևորում է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը, քանի որ վերջինիս որոշումները՝ պայմանավորված այդ դատարանի սահմանադրական գործառույթներով, կարևորվում են ոչ միայն դատավարության կողմերի շահերի տեսանկյունից, այլ նաև ողջ հանրության շահերի տեսանկյունից:

Օրենսդրական վիճարկվող կարգավորումը, կարծում ենք, չի բխում Սահմանադրության պահանջներից: Այն, ըստ էության, շրջանցում է անձի՝ սահմանադրորեն երաշխավորված դատարան դիմելու լեգիտիմ ակնկալիքը և լիարժեք դատական պաշտպանության հնարավորությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 4-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 75-րդ, 78-րդ և 171-րդ հոդվածներին խնդրահարույց է:

 Recoverable Signature

Համակարգող՝

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169